ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 52 68 44
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ info@moh.am

19.01.16 N 1/2/11.2/380-16

Ձեր N _____

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-Ի
ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ ԼԻԱՆԱ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
(ՀԱՍՑԵ՝ ՀՀ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ, ԲՈՒԶԱՆԴԻ 1/3, 4-ՐԴ ՀԱՐԿ)

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը հասցեագրված Ձեր 2016 թվականի հունվարի 13-ի թիվ 4/415-16 հարցմանը՝ կապված ՀՀ առողջապահության նախարարության ենթակայության տակ գտնվող կենսաչափական կամ հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ մշակող կառույցների կողմից «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված պարտադիր ծանուցումը ներկայացնելու վերաբերյալ տեղեկատվության տրամադրման հետ, տեղեկացնում եմ հետևյալը.

2015 թվականի դեկտեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից շրջաբերական է ուղարկվել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության համակարգում ընդգրկված նախարարության ենթակայության կազմակերպություններին, ինչպես նաև մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի ենթակայության կազմակերպություններին տեղեկացնելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության

մարզպետարանների աշխատակազմի ղեկավարներին և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարին, որով վերջիններս հայտնվել է անձնական տվյալներ մշակելիս «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները պահպանելու անհրաժեշտության մասին:

Բացի այդ առողջապահական կազմակերպություններին օրենքի պահանջներին տեղեկացնելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից ծանուցում է տեղադրվել նաև www.moh.am պաշտոնական կայքում:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է, որ անձնական տվյալներ մշակողը (այդ թվում պետական կամ համայնքային հիմնարկը կամ կազմակերպությունը, իրավաբանական կամ ֆիզիկական անձը, որը կազմակերպում և (կամ) իրականացնում է անձնական տվյալների մշակումը), մինչև կենսաչափական կամ հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ մշակելը պարտավոր է ***անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնին*** ծանուցել տվյալներ մշակելու մտադրության մասին:

Վերոգրյալից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության համակարգում ընդգրկված նախարարության ենթակայության կազմակերպությունները համապատասխան ծանուցումները ներկայացնում են ոչ թե ՀՀ առողջապահության նախարարությանը, այլ անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնին՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալություն:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվում է, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկատվությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն ***տնօրինողին*** և ստանալու այդ տեղեկատվությունը:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով չի հանդիսանում նշված օրենքի դրույթների

կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմին, կից ներկայացնում ենք ՀՀ առողջապահության նախարարության համակարգում ընդգրկված նախարարության ենթակայության կազմակերպությունների ցանկը և առաջարկում ենք անմիջականորեն դիմել վերջիններիս:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

Կատարող՝Նելլի Թովմասյան
ՀՀ ԱՆ իրավաբանական վարչություն
Հեռ., 56-56-81